

2018

<<ՀԻՆ ԵՐԵՎԱՆ>> ԹԱՂԱՄԱՍ

---

Փ. ԲՈՒՋԱՆԴԻ 12, 14 և ԱՐԱՄԻ 11/1 ՀԱՏՎԱԾ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ

ԿԱՏԱՐՈՂ  
Ա/Ձ Ա. ԳԱԼՈՅԱՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

<<ՍԵՐԳԵ-ԱԳՈՊԻԳ ԴԵՐ-ՍԱՀԱԳՈՒՅԱՆ>> ՍՊԸ

<<ՍԹԱՐԼԱՅՆ>> ՍՊԸ

Ա/Ձ Ա. Գալոյան  
ՀՀ ք. Երևան Վրացական 16  
Հեռ. բջջ. +374 99 994222  
galoyan.aram@gmail.com



<<ՀԻՆ ԵՐԵՎԱՆ>> ԹԱՂԱՄԱՍ

Փ. ԲՈՒԶԱՆԴԻ 12, 14 և ԱՐԱՄԻ 11/1 ՀԱՏՎԱԾ

---

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

<<ՍԵՐԳԵ-ԱԳՈՊԻԳ ԴԵՐ-ՍԱՀԱԳՈՒՅԱՆ>> ՍՊԸ տնօրեն՝

Վ. Հարությունյան

<<ՍԹԱՐԼԱՅՆ>> ՍՊԸ տնօրեն՝

Ա. Ասլանյան

Ա/Ձ Արամ Գալոյան

Երևան 2018

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	4
1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն.....	4
1.2	Հապավումներ .....	4
1.3	Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը .....	5
1.4	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ) .....	6
1.4.1	<i>«Հին Երևան» թաղամասի կառուցապատման ներդրումային ծրագրի.....</i>	<i>6</i>
	<i>ընդհանուր նկարագիր.....</i>	<i>6</i>
1.4.2	<i>Շինարարական աշխատանքների կազմակերպում.....</i>	<i>13</i>
2.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ .....	16
2.1	Ֆիզիկաաշխարհագրական պայմանները.....	16
2.2	Կլիման .....	16
2.3	Օդային ավազան .....	21
2.4	Ջրային ռեսուրսներ .....	22
2.5	Հողերի նկարագիրը .....	23
2.6	Հողերի նպատակային և գործառնական նշանակությունը .....	23
2.7	Թափոնների կառավարում .....	23
3.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ .....	23
3.1	Ռիսկերի գնահատում .....	24
3.2	Արտանետումների աղբյուրները.....	24
3.3	Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն .....	24
3.3.1	<i>Մթնոլորտային օդ.....</i>	<i>24</i>
3.3.2	<i>Ջրային ռեսուրսներ .....</i>	<i>24</i>
3.3.3	<i>Հողային ռեսուրսներ.....</i>	<i>25</i>
3.3.4	<i>Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը.....</i>	<i>25</i>
3.3.5	<i>Աղմուկ.....</i>	<i>26</i>
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	27
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ .....	29
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	25

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն**

- 1.2 Ձեռնարկող՝ <<ՍԵՐԳԵ-ԱԳՈՊԻԳ ԴԵՐ-ՍԱՀԱԳՈՒՑԱՆ>> ՍՊԸ, <<ՍԹԱՐԼԱՑՆ>> ՍՊԸ
- 1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝ ՀՀ ք. Երևան Վաղարշյան 8/1, ՀՀ ք. Երևան Արարատյան 90/9
- 1.4 Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝ ՀՀ ք. Երևան Վաղարշյան 8/1, ՀՀ ք. Երևան Արարատյան 90/9
- 1.5 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝ Կենտրոն վարչական տարածք, Փ. ԲՈՒԶԱՆԴԻ 12, 14 և ԱՐԱՄԻ 11/1 ՀԱՏՎԱԾ
- 1.6 Հեռախոս՝ +374 99081500
- 1.7 Աշխատանքային նախագծի մշակող՝ <<ԼՎՔ>> ՍՊԸ

**1.2 Հապավումներ**

- ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն
- ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն
- ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
- ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

### 1.3 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենտրոնի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

«Հին Երևան» պատմաճարտարապետական միջավայրը նախատեսված է իրականացնել գլխավոր պողոտայի տարածքում՝ մոտ 2 հա մակերեսով Աբովյան, Փ.Բուզանդ, Ե. Կողբացի և Արամի փողոցներով սահմանափակվող թաղամասում: Սա քաղաքի միակ հատվածն է, որտեղ պահպանվել է պատմական կառուցապատումը: Կիրառական տեսակետից՝ տարածքը Երևանի կենտրոնական թաղամասում է՝ հետիոտնային շարժման ամենաբանուկ հատվածում: Թաղամասը վերակառուցելու հիմնական նպատակն է՝ պատմական կառուցապատված տարածքների կիրառական-գեղագիտական բարելավումն է, կանոնավոր կառուցապատմամբ արգելանոցային գոտու սահմանումը եւ ներգրավումը քաղաքի կենսագործունեության մեջ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը մշակվում է «Հին Երևան» համալիրի Փ. Բուզանդի 12, 14 և Արամի 11/1 հատվածի համար:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է "Բ" կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

«Հին Երևան» թաղամասի Փ. Բուզանդի 12, 14 և Արամի 11/1 հատվածի կառուցման աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին " ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

**1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)**

**1.4.1 «Հին Երևան» թաղամասի կառուցապատման ներդրումային ծրագրի ընդհանուր նկարագիր**

«Հին Երևան» պատմաճարտարապետական միջավայրը նախատեսված է իրականացնել գլխավոր պողոտայի տարածքում՝ մոտ 2 հա մակերեսով Աբովյան, Փ.Բուզանդ, Ե. Կողբացի և Արամի փողոցներով սահմանափակվող թաղամասում: Սա քաղաքի միակ հատվածն է, որտեղ պահպանվել է պատմական կառուցապատումը: Կիրառական տեսակետից՝ տարածքը Երևանի կենտրոնական թաղամասում է՝ հետիոտնային շարժման ամենաբանուկ հատվածում:

Թաղամասը վերակառուցելու նպատակը պատմական կառուցապատված տարածքների կիրառական գեղագիտական բարելավումն է, կանոնավոր կառուցապատմամբ արգելանոցային գոտու սահմանումը և ներգրավումը քաղաքի կենսագործունեության մեջ:

Պատմական կառույցների հիմնական ֆոնդում 19-րդ դարի եւ 20 դարասկզբի բնակելի տների բնօրինակներն են՝ միաձուլված ներքին բակերով եւ այգիներով, միավորված ազգային ձևերի միասնական հոգով թաղամասային կառուցապատման ընդհանուր համալիրում: Իրենց շեշտով, ուրիշով, չափերով և ներդաշնակությամբ այն ինքնաբերաբար ստեղծված անկրկնելի ճարտարապետագագսմունքային միջավայր է: Այդ ամենի հետ մեկտեղ՝ բացահայտ ընկալվում է ըստ ժամանակի ոճային տարատեսակ կառուցապատումը, որը հնարավորություն է տալիս հետևել ճարտարապետության զարգացմանը ողջ դարաշրջանի ընթացքում:

19-րդ դարի առաջին կեսի կառույցների պատերի գունագեղ աղյուսե շարվածքը կամ ավելի ուշ ժամանակի կառույցների տուֆի ռուստը, զուսպ կամ հարուստ զարդարված ճակատները, զարդանախշ, փայտե կամ մետաղե պատշգամբները, միշտ գերիշխող ճակտոնները եւ միջանցիկ անցումների կամարները միահամուռ ստեղծում են Երեւանի բնակելի թաղամասի ճարտարապետաքաղաքաշինական կերպը, որտեղ յուրաքանչյուր կառույց ուրույն երանգ է հաղորդում փողոցների ճարտարապետագեղարվեստական ձեւավորման և ցուցադրանքի արտահայտչականության մեջ:

Արգելանոցային գոտու տարածքը լրակազմվում է այլ փողոցներից կազմաքանդված 15 պատմական կառույցներով: Վերջին գործողությունն արդարացվում է մի քանի նկատառումներից ելնելով: Առաջինը՝ կարգավորվում է տարածքը՝ գեղագիտորեն կանոնավորված ճարտարապետաքաղաքաշինական միջավայր ստեղծելու տեսանկյունից: Խնդիրը ժամանակի ընթացքում կառույցների միջև չկառուցապատված ազատ տարածությունների կարմիր գծի վերալցնելն է. այդ տարածքները զբաղեցված են պատմականորեն չհիմնավորված կառույցներով: 2 Երկրորդը՝ լուծվում է վաղ ժամանակներում քանդված և կորած պատմության ու մշակույթի հուշարձանները վերականգնելու խնդիրը: Երրորդը՝ հնարավորություն է ստեղծվում արգելանոցային գոտու տարածքում տեղափոխման եղանակով վերաստեղծել քաղաքաշինական գեղագիտական միջավայր՝ ժամանակակից խիտ

բարձրահարկերով կառուցապատումը համադրելով 19-20 դդ ճարտարապետական ստեղծագործություններով:

Ճարտարապետական նախագծի մտահղացման նպատակն է՝ վերստեղծել այն միջավայրը, որով կարդիականացվի տարածքը, կամրացվեն կիրառական ենթակառուցվածքները, միաժամանակ կմեծանա տարածքի առևտրական և մշակութային նշանակությունը: Դրանք հարմարավետ սրճարաններ և ռեստորաններ են, որոնք դուրս են գալիս դեպի բաց սրահներ և այգիներ (դրանք բնորոշ են շոգ կլիմայով երկրներում), մասնագիտացած ցուցասրահների և թանգարանների խանութ-սրահներ են, գեղարվեստական սրահներ, ոչ մեծ բարձրակարգ հյուրանոցներ և այլն:

Նախագծի ճարտարապետական մեկնաբանման մեջ օտագործվում են հին և նոր ձևերի հակադրվող կամ ներդաշնակ համեմատություններ՝ փայտե նախշագարդ կամարաձև սրահներն ապակեպատ հարթություններով, հին տների կանաչ և բաց տարածությունները՝ ժամանակակից ձևերով ու շատրվաններով: Թաղակապ քարե նկուղները՝ հին տան կառուցվածքի յուրօրինակ տարրերը, զարգանում են ստորգետնյա երեք ավտոկանգառի հարկերում, որոնք լայնությամբ ձգվում են ողջ թաղամասի երկայնքով: Ավտոկանգառներում կլինի հանրային օգտագործման 1400 մեքենայի տեղ, որով էապես լուծվում է շրջակա փողոցների ավտոկանգառների խնդիրը: Նախագիծն իրագործելով՝ կլուծվեն նաև զբոսաշրջային երթուղու հիմնական խնդիրները:

#### **1.4.2 «Հին Երևան» համալիրի Փ. Բուզանդի 12, 14 և Արամի 11/1 հատվածի նկարագիր**

«Հին Երևան թաղամասի» տվյալ հատվածի մշակման համար նախատեսվել է օգտագործել խորհրդային ժամանակաշրջանի առաջին տարիներին ենթադրաբար քանդված ճարտարապետ Վասիլի Միրզոյանի նախագծով իրականացված Եկամտաբեր տունը, որը գտնվում էր Աստաֆյան փողոցի վրա և հանդիսանում էր նշված ժամանակաշրջանի Երևանի ճարտարապետության տիպիկ լավագույն օրինակներից: Երկրորդ կառույցը՝ Միրզոյան եղբայրների տունն է, որը ժամանակին գտնվում էր Ամիրյան փ.16 հասցեով: Ըստ նախագծի Միրզոյան եղբայրների տունը տեղադրված է Բուզանդ փողոցի վրա «35»-«38» և «Ա»- «Ե» առանցքներով, եկամտաբեր տունը՝ «38»-«45» և «Ա»-«Դ»առանցքներով,

Մառանային ստորգետնյա հարկից բացի /-5,50 նիշի վրա/ կա ևս երկու ստորգետնյա հարկ -9,40 և -13,00 նիշերի վրա, որոնք նախատեսված են որպես ավտոկանգառներ; երկու հարկը միասին ներառում է 69 ավտոկայանատեղ; Այս նախագծի ներկայացման հիմնական նպատակը ստանալ շինարարության թույլտվություն 0,00 Նիշից վերև:

Բացի հուշարձանների երկու հարկից, /առաջին հարկը եկամտաբեր տունը՝ 0,00 նիշի վրա, իսկ Միրզոյան եղբայրների տունը՝ +1,00 նիշի վրա, երկրորդ հարկը +4,60 նիշի վրա/ կառույցները ունեն ևս 2 վերգետնյա հարկ +9,20 և +12,5 նիշերի վրա և շահագործվող տանիք +17,50 նիշի վրա

**1.4.3 Ճարտարապետ Վասիլի Միրզոյանի նախագծած եկամտաբեր տան և Ավետիք Միրզոյանի տան բնութագրերն Բուզանդ փողոցում**

Եկամտաբեր տուն խանութներով հուշարձանի բնութագիրը Ճարտարապետական բնութագրում. երկհարկանի հատակագծային հորինվածքը սիմետրիկ է, կազմված հիմնական ուղղանկյունից երկշարք դասավորված սենյակներով:

Շենքի առաջին հարկը ամբողջ երկայնքով նախատեսված է եղել, որպես խանութներ, որն արտահայտվում է ճակատի վրա մեծ ապակե ցուցափեղեկերով: Խանութների մուտքերը՝ և՛ գլխավոր ճակատից էին, և՛ բակի կողմից: Բակի ճակատի երկարությամբ 2-րդ հարկի մակարդակով 2 բաց պատշգամբասրահներ են: Գլխավոր ճակատի երկրորդ հարկի մակարդակով որմնասյուները հարստացված են կանացի որմնաքանդակներով:

Շինարարական նյութը և ճակատների բնութագիրը. ճակատը նեո-գոթական ոճով է, որին բնորոշ է սիմետրիան, ճակատի բաժանումները օգտագործելով որպես ճարտարապետական տարրեր ռուստիկան և որմնասյուները, վերջիններս պսակվում են գոթական ճարտարապետությանը հատուկ վեր սլացող էլեմենտներով: Գլխավոր ճակատը հարուստ է գոթական ճարտարապետությանը բնորոշ էլեմենտներով՝ ծոփորի հարթաքանդակներով, տիմպաններով, օրիգինալ մետաղական բազրիքների նկարվածքով, որոնք զարդարում են ինչպես պատշգամբները այնպես էլ քիվերը: Երկրորդ հարկի մակարդակով որմնասյուները հարստացված են կանացի որմնաքանդակներով:

Գլխավոր ճակատը սիմետրիկ է և ունի երեք վերտիկալ առանցք, որոնցից շեշտված է շենքի կենտրոնական հատվածը:

Գլխավոր մուտքը, որը հանդիսանում էր անցում դեպի ներքին բակը, տեղադրված է կառույցի կենտրոնական առանցքի վրա: Մուտքը ավելի նեղ է և կամարակապ: Բնակելի հարկը լուծված է կամարակապ լուսամուտների շարքով: Գլխավոր ճակատին ունի բարձակային երեք պատշգամբ:

Ճակատը երեսապատված է երևանյան սև և նարնջագույն տուֆերի խաղով:

**Ավետիք Միրզոյանի տունը**

Կառուցված է եղել երկու բարեկամ ընտանիքների համար: Ճարտարապետական բնութագրում. Երկհարկանի է, կիսանկուղային հարկով, ուր ժամանակին եղել ենն տնտեսական և օժանդակ սենյակներ: Նկուղն ունի գլանաձև թաղային ծածկ և բնական լուսավորվածությունն ապահովող դեպի փողոց նայող լուսամուտներ. այս հատվածը հատկացված է եղել մառանին: Տունը բաղկացած է գլխավոր մասնաշենքից և ձախ կողմում բակի երկհարկանի շինությունից, որը ծառայել է որպես խոհանոց: Գլխավոր մասնաշենքի հատակագիծը ուղղանկյուն է, կարճ կողմով դրված փողոցի կարմիր գծին, սենյակները դասավորված են երկշարք կարգով: Կառույցի մուտքը բակի կողմից է, ուր փողոցից ճակատի աջ հատվածից տանում է կամարանցումը կիսաշրջանաձև թաղով: Փայտյա պատշգամբները ձգվում են բակի ճակատներով և կապում բոլոր սենյակները միմյանց հետ: Շինարարական նյութը և ճակատների բնութագիրը. Գեղարվեստական լուծման մեջ օգտագործված են հարկերին համապատասխան բնական և արհեստական քարեր. առաջին հարկում նարնջագույն տոնայնության տուֆ, իսկ երկրորդ հարկում՝ թրծած



աղյուս: Տուֆի եռանկյունիները զարդարում են պատուհանագոգի գոտին և կամարների տիմպանները, իսկ աղյուսի տարատեսակ շարվածքները՝ ծոփորը (ճակատի վերին հատվածը): Գլխավոր ճակատը ասիմետրիկ է, աջ հատվածում ընդգծվում է թաղակապ անցումը և իր առանցքով երկրորդ հարկում տեղադրված լայն եռափեղկ պատուհանը, որն ավարտվում է աղեղնավոր կամարով: Ժամանակին ունեցել է հարթ տանիք, որը պահպանվել է նախագծում: Ճակատն ավարտվում է պարզ քիվով:

**ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԵՐՐՈՐԴ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԸՍՏ -13,00 ՆԻՇԻ**

**Եկամտաբեր տուն և Միրզոյան եղբայրների տուն**

Մեքենաների քանակը՝ 40 հատ

Նախամուտք՝ 14.50 մ<sup>2</sup>

Ընդհանուր մակերեսը՝ 1142.0 մ<sup>2</sup>

Շինարարական մակերես՝ 1352.5 մ<sup>2</sup>

**ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԸՍՏ -9,40 ՆԻՇԻ**

**Եկամտաբեր տուն և Միրզոյան եղբայրների տուն**

Մեքենաների քանակը՝ 29 հատ

Նախամուտք՝ 14,50 մ<sup>2</sup>

Ընդհանուր մակերեսը՝ 920.0 մ<sup>2</sup>

Շինարարական մակերես՝ 1352.5 մ<sup>2</sup>

**ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԸՍՏ -5,50 ՆԻՇԻ**

**Եկամտաբեր տուն**

**Միրզոյան եղբայրների տուն**

Առևտրահասարակական տարածքների

Նախասրահ, միջանցք՝ 21,0 մ<sup>2</sup>

մակերեսը՝ 673,5 մ<sup>2</sup>

Ս.Հ.՝ 9,0մ<sup>2</sup>

Նախասրահ միջանցք՝ 14,50 մ<sup>2</sup>

Սրահ՝ 136,8 մ<sup>2</sup>

Ընդհանուր մակերեսը՝ 688,0 մ<sup>2</sup>

Ընդհանուր մակերեսը՝ 166,8 մ<sup>2</sup>

Շահագործվող հարթակ՝ 253,0 մ<sup>2</sup>

Եկամտաբեր տան և Միրզոյան եղբայրների տան Շինարարական մակերեսը՝ 1352,5 մ<sup>2</sup>

**ԱՌՋՐՆ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԸՍՏ ±0,00 և +1,00 ՆԻՇԵՐԻ**

Եկամտաբեր տուն	Միրզոյան եղբայրների տուն
Առևտրահասարակական տարածք՝ 11 հատ	Նախասրահ, միջանցք՝ 24,30 մ <sup>2</sup>
Առևտրահասարակական տարածքների մակերեսը՝ 631,6մ <sup>2</sup>	Ս.Հ.՝ 9,5 մ <sup>2</sup>
Նախասրահ միջանցք՝ 30,40մ <sup>2</sup>	Սրահներ և պատշգամբ՝ 67,6 մ <sup>2</sup>
Ընդհանուր մակերեսը՝ 662,0 մ <sup>2</sup>	կամարանցում՝ 41,4 մ <sup>2</sup>
	Ընդհանուր մակերեսը՝ 142,8 մ <sup>2</sup>

Շահագործվող հարթակ՝ 353,0 մ<sup>2</sup>

Եկամտաբեր տան և Միրզոյան եղբայրների տան Շինարարական մակերեսը՝ 1020,0 մ<sup>2</sup>

**ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԸՍՏ +4,60 ՆԻՇԻ**

Եկամտաբեր տուն	Միրզոյան եղբայրների տուն
Բնակարան՝ 8 հատ	Նախասրահ, միջանցք՝ 8,00 մ <sup>2</sup>
Բնակելի մակերեսը՝ 652,78մ <sup>2</sup>	Ս.Հ.՝ 9,5 մ <sup>2</sup>
Նախասրահ միջանցք՝ 60,70 մ <sup>2</sup>	Սրահներ և պատշգամբ՝ 152,35 մ <sup>2</sup>
Ընդհանուր մակերեսը՝ 731,48 մ <sup>2</sup>	Ընդհանուր մակերեսը՝ 169,85 մ <sup>2</sup>

Շինարարական մակերեսը՝ 1089,43մ<sup>2</sup>

**ԵՐՐՈՐԴ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԸՍՏ +9,20 ՆԻՇԻ**

Եկամտաբեր տուն	Միրզոյան եղբայրների տուն
Բնակարան՝ 8 հատ	Նախասրահ, միջանցք՝ 8,5 մ <sup>2</sup>
Բնակելի մակերեսը՝ 647,45 մ <sup>2</sup> մ <sup>2</sup>	Ս.Հ.՝ 10,7 մ <sup>2</sup>
Նախասրահ միջանցք՝ 60,70 մ <sup>2</sup>	Սրահներ և պատշգամբ՝ 141,5 մ <sup>2</sup>
Ընդհանուր մակերեսը՝ 708,15 մ <sup>2</sup>	Ընդհանուր մակերեսը՝ 160,7 մ <sup>2</sup>

Շինարարական մակերեսը՝ 1041,00մ<sup>2</sup>

**ՉՈՐՐՈՐԴ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԸՍՏ +12,50 ՆԻՇԻ**

<b>Եկամտաբեր տուն</b>	<b>Միբրգոյան եղբայրների տուն</b>
Բնակարան՝ 8 հաստ	Նախասրահ, միջանցք՝ 8,5 մ <sup>2</sup>
Բնակելի մակերեսը՝ 523,25 մ <sup>2</sup>	Ս.Հ.՝ 9,90 մ <sup>2</sup>
Նախասրահ միջանցք՝ 59,70 մ <sup>2</sup>	Սրահի մակերեսը 74,0 մ <sup>2</sup>
Ընդհանուր մակերեսը՝ 582,95 մ <sup>2</sup>	խոհանոց՝ 32,0 մ <sup>2</sup>
	<b>Ընդհանուր մակերեսը՝ 124,4 մ<sup>2</sup></b>

Շինարարական մակերեսը՝ 865,72մ<sup>2</sup>

**ՇԱՀԱԳՈՐԾՎՈՂ ԲԱՑՕԹՅՑ ՏԱՆԻՔ ԸՍՏ +17,50 ՆԻՇԻ**

Շահագործվող բացօթյա տանիք՝ 589.5 մ<sup>2</sup>  
 Սրահ՝ 227.4 մ<sup>2</sup>  
 Ընդհանուր մակերեսը՝ 830.6 մ<sup>2</sup>  
 Շինարարական մակերեսը՝ 714.5 մ<sup>2</sup>

Երկու շենքերը միասին ընդհանուր մակերեսը՝ 7635,73 մ<sup>2</sup>  
 Երկու շենքերը միասին Շինարարական մակերեսը՝ 8788,15 մ<sup>2</sup>

**1.4.4 Ջեռուցում և օդափոխություն**

Շենքի ջեռուցման և օդափոխության նախագիծը կատարված է համաձայն.

- պատվիրատուի առաջադրանքի,
- ճարտարապետա-շինարարական գծագրերի,
- գործող շինարարական նորմերի ու կանոնների,

ՀՀՇՆ IV-12.02.01-00 "Ջեռուցում, օդափոխություն և օդի լավորակում",

СНиП 41-01-2003 "Отопление, вентиляция и кондиционирование",

ՀՀՇՆ II-7.01-2011 "Շինարարական կլիմայաբանություն",

ГОСТ 30494-96 "Здания жилые и общественные. Параметры микроклимата в помещениях".

ՀՀՇՆ 24-01-2016 "Շենքի ջերմային պաշտպանություն".

Пособие II-7.102-98 «Արտաքին կոնստրուկցիաների շինարարական ջերմաֆիզիկա»;

МДСН 41-1.99 «Рекомендации по противодымной защите при пожаре»;

СП 113.13330.2012 Стоянки автомобилей;

СП 300.1325800.2017 Системы струйной вентиляции и дымоудаления подземных и крытых автостоянок;

**Կլիմայական և մետեորոլոգիական պայմաններ.**

Ջեռուցման համակարգի նախագծման արտաքին օդի հաշվարկային պարամետրերը.

Ձմեռ ( B պարամետրեր)

Ջերմաստիճան մինուս 19°C,

Ջեռուցման սեզոնի միջին ջերմաստիճան պլյուս 1°C

Ջեռուցման սեզոնի տևողությունը 140 օր

Ամառ.

Ջերմաստիճան պլյուս 35°C

**ՋԵՌՈՒՑՈՒՄ, ՍԱՌԵՑՈՒՄ**

Ջեռուցման հաշվարկի համար ընդունված են .

Ջեռուցման սեզոնի ջերմաստիճան-օրերը  $D_d, °C \times \text{օր}$  որոշվում է

$$D_d = (t_{int} - t_{ht}) \times Z_{ht}$$

որտեղ  $t_{int}$  - ներքին օդի միջին ջերմաստիճանն է, °C

$t_{ht}, Z_{ht}$  - ջեռուցման սեզոնի միջին ջերմաստիճանը՝ °C և սեզոնի տևողությունը՝ օր:

Սրճարանի համար

$$D_d = (22 - 1.0) \times 140 = 2940 \text{ } °C \times \text{օր}$$

Ելնելով վերը հաշվարկվածից՝ ըստ ՀՀՇՆ 24-01-2016 "Շենքի ջերմային պաշտպանություն" արտաքին կոնստրուկցիաների թերմիկ դիմադրությունները կլինեն.

Շենք	Արտաքին կոնստրուկցիաների թերմիկ դիմադրություն $R_{req}, \text{մ}^2 \times \text{°C}/\text{Վտ}$				
	Պատ	Վերնածածկեր	Ձեղնահարկի ծածկեր	Լուսամուտներ, դռներ, Վիտրաժներ	Երդիկ
	2.0		1.50	0,39	

Ջերմաստանամատակարարման համակարգերի սնուցման աղբյուր է հանդիսանում.

ա) ջրային կամ օդային հովացմամբ ջերմային պոմպերով սառեցման (ջեռուցման) էլեկտրական սնուցմամբ տեղակայումը,

բ) ջրային կամ օդային հովացմամբ չիլլերային սառեցման և էլեկտրական սնուցմամբ կաթսայական տեղակայումը:

Նշված տարբերակներից ընտրությունը կկատարվի նախագծման ընթացքում՝ պատվիրատուի համաձայնությամբ:

**ՕՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ, ԾԽԱՀԵՌԱՑՈՒՄ**

Նախատեսվում է բնական և ընդհանուր փոխանակային ներածման-արտածման օդափոխության համակարգեր՝ կախված սենքերի նշանակությունից:

Ավտոհանգրվանում նախագծված է համատեղված ներածման-արտածման ընդհանուր փոխանակային և ծխահեռացման համակարգ (շիթային օդափոխություն), որն ապահովում է միջավայրի օդի համապատասխան պարամետրերն ու հրդեհի դեպքում մարդկանց տարահանումը:

Քանի որ ավտոհանգրվանի հարկերից յուրաքանչյուրի մակերեսը մեծ է 2500 մ<sup>2</sup>-ից, համակարգն իրականացված է ընդերկայնական ռելիեֆի սխեմայով: Համակարգը թույլ է տալիս երկու հարկը միասին դիտարկել որպես մեկ հրդեհային հատվածամաս (ընդհանուր մակերեսը փոքր է 10000 մ<sup>2</sup>-ից):

Համակարգը օդափոխության ռեժիմով ժամանակ միանում է CO-ի տվիչների ազդանշանով ավտոմատ ձևով կամ մեխանիկորեն:

Օդի շարժմանը նվազագույն շփման դիմադրություն ապահովելու նպատակով շիթային օդամուղները տեղադրվում են մեքենաների շարժման ուղիներով: Օդի շարժմանն ուղղահայաց հեծանների առկայության դեպքում օգտագործվում են ուղղորդիչ կցորդներ, որոնք օդի շիթը թեքում են առավելագույնը 10<sup>0</sup>-ով:

Օդամուղները հաշվարկված են 2 ժամվա ընթացքում հեռացվող ծխագազերի 400 °C-ի պայմաններում անխափան աշխատանքի համար:

Հաշվարկի ելակետային տվյալներ.

- հրդեհի ջերմային հզորությունը 8.0 ՄՎտ,
- մեքենաների հերթափոխության գործակիցը 1.0 ժ<sup>-1</sup>,
- ծխագազերի ավազանի ներքևի սահմանը 2.0 մ,
- ներածվող օդի ջերմաստիճանը 15 °C,
- Ֆրուդի թիվը Fr 6.0:

Հաշվարկի արդյունքներ.

- Հրդեհի կոնվեկտիվ հզորությունը 5.6 ՄՎտ:

***1.4.5 Շինարարական աշխատանքների կազմակերպում Շինարարության օրացուցային պլանը և կադրային ապահովումը***

«Հին Երևան» պատմաճարտարապետական միջավայրը նախատեսված է իրականացնել գլխավոր պողոտայի տարածքում՝ մոտ 2 հա մակերեսով Աբովյան, Փ.Բուզանդ, Ե. Կողբացի և Արամի փողոցներով սահմանափակվող թաղամասում:

Համաձայն ճարտարապատահատակագծային առաջադրանքի, հողամասի մակերեսը կազմում է 1.99 հա.

Փ. Բուզանդի 12, 14 և Արամի 11/1 հատվածի կառուցապատողներն են՝ «Սերգե-Ագոպիգ Դեր-Սահագույան» ՍՊ և «Սթարլայն» ՍՊ ընկերությունները:

Նախքան շինարարական աշխատանքների սկսումը տվյալ տարածքում իրականացվել է բնակելի տների քանդման աշխատանքներ հետևյալ հասցեներով՝ Բնակելի տուն Բուզանդի 10 հասցեով, Բնակելի տուն Բուզանդի 12 հասցեով, տարածք

Բուզանդի 14 հասցեով, բնակելի տուն Բուզանդի 16 հասցեով, բնակելի տուն Բուզանդի 18 հասցեով, բնակելի տուն Արամի 11 հասցեով, բնակելի տուն Արամի 11/1 հասցեով, բնակելի տուն Արամի 11/2 հասցեով, բնակելի տուն Արամի 13 հասցեով, բնակելի տուն Արամի 15 հասցեով, բնակելի տուն Արամի 15ա հասցեով:

Քանդվող շինությունների ծավալը կազմում է 2000մ<sup>3</sup>, առաջացող շինադրը տեղափոխվել է Սիլիկյան հանգույցի հիմնահողերի և շինադրի աղբավայր, նախապես համաձայնեցնելով տեղական ինքնակառավարման մարմնի հետ:

Նշված տարածքների օտարումը իրականացվել է համաձայն 25 հունվարի 2007 թվականի N 108-Ն որոշման:

Հողատարքը կից է բնակելի և հասարակական կառույցների:

Շինարարական աշխատանքները նախատեսվում է իրականացնել 156 շաբաթվա կամ 36 ամսվա ընթացքում, այդ թվում՝

- Տարածքի նախապատրաստումը, ժամանակավոր ցանկապատի տեղադրում
- Տարածքի նախապատրաստումը, ժամանակավոր ցանկապատի տեղադրում
- Հիմքի պատրաստում
- Արտաքին ինժեներական ցանցի կառուցում
- Միաձույլ ե/բ կարկասի կառուցում
- Միաձույլ ե/բ սալերի կառուցում
- Տանիքի կոնստրուկցիաների և ծածկի մոնտաժում
- Միջնորմների և կեղծ առաստաղների կարկասի մոնտաժում
- Ներքին ինժեներական ցանցերի մոնտաժում
- Բացվածքների լրացում, ապակե ծածկերի 10 մոնտաժում
- Ճակատների երեսապատում և հարդարում
- Ներքին ինժեներական ցանցերի փորձարկում
- Ներքին հարդարման աշխատանքներ
- Բարեկարգում
- Ավարտական ակտի ձևակերպում

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմման պահին արդեն իսկ իրականացվել են հետևյալ շինարարական աշխատանքները՝

Փոստրակի վերջնական քանդելուց հետո կատարվել է փոստրակի հատակի համահարթեցում և տարածքի սահմանազատում Արամի փողոցի երկայնքով:

2.09.07.2018թ. դրությամբ կատարվել է .

ա.Խճի նախաշերտի իրականացում 36-45;E-F,36-40;F-J առանցքներով

բ.Բետոնի նախաշերտի կառուցում, ջրամեկուսացում

գ.Հ/հ ամրանային կարկասների կառուցում և բետոնացում նշված առանցքներով

- դ.Սյուների ամրանային կարկասների կառուցում և բետոնացում
- ե.Ամրանավորված հատակների կառուցում
- զ.-9.6 նիշում միաձույլ ծածկի և հեծանների ամրանային կարկասների կառուցում և բետոնացում
- է.-9.6-5.7 նիշում սյուների բետոնացում
- ը.-5.7 նիշում ծածկի և հեծանների ամրանային կարկասների կառուցում և բետոնացում
- թ. Հ/հ ամրանային կարկասների կառուցում 40-45;H-J առանցքներով
- .Հանված հողի քանակը– 34000 մ<sup>3</sup>,**
- հետլիցք արված հողի քանակը – 450 մ<sup>3</sup>**
- Շին. հրապարակում աշխատողների քանակը.**
- ա. ԻՏԱ - 4 հոգի
- բ. Բանվորական անձնակազմ – 20-35 հոգի
- Օգտագործվող շին. տեխնիկա**
- ա.Վերամբարձ կռունկ
- բ.Ավտոամբարձիչ
- գ.Բետոնախառնիչ պոմպ
- դ.Բետոնախառնիչ մեքենաներ – 5-10 հատ
- ե.Բեռնավիոխաղրող մեքենաներ - 3-5 հատ
- զ.Խորքային բետոնախտացուցիչներ
- է.Եռակցող ապարատներ – 2 հատ

**1. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ**

**1.1 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները**

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմնահարված, էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

**1.2 Կլիման**

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ Երևան-«Էրեբունի» օդերևութաբանական կայանի տվյալների:

Ջերմաստիճանի բացարձակ մինիմումը ոչ ցածր է քան  $-30^{\circ}\text{C}$ , բացարձակ մաքսիմումը հասնում է  $+42^{\circ}\text{C}$ : Օդի միջին ջերմաստիճանները ըստ ամիսների Երևան քաղաքի հարավային արդյունաբերական շրջանի համար բերված են աղյուսակ 2.1-ում «Շինարարական կլիմատոլոգիա» ՇՈՒՍ II-7.01-96 տվյալների համաձայն:

**Օդի միջին ջերմաստիճանը,  $^{\circ}\text{C}$**

Աղյուսակ 2.1.

Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
-3.4	-0.9	5.3	12.4	17.4	21.6	25.5	25.2	20.5	13.5	6.5	-0.2	<b>12.0</b>

Օդի հարաբերական խոնավության բնութագիրը ըստ Երևան-«Էրեբունի» մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2.2-ում:

**Օդի հարաբերական խոնավությունը, %**

Աղյուսակ 2.2.

Միջինը ըստ ամիսների, %	միջին



I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	տարեկան
78	73	63	55	55	49	45	44	49	60	72	78	<b>60</b>

Տեղումների բնութագիրը ըստ Երևան-«Էրեբունի» օդերևութաբանական կայանի տվյալների բերված է աղյուսակ 2.3-ում: Էրեբունի կայանը գտնվում է 888 մ ծ.մ. բարձրության վրա: Կլիման բնութագրվում է տեղումների ցածր քանակով: Տեղումների միջին տարեկան նորման չի գերազանցում 316 մմ: Շրջակայքում գոլորշիացման էներգետիկական հնարավորությունները զգալիորեն գերազանցում են տեղումների քանակը, այդ պատճառով կլիման չոր է:

Չյան ծածկույթի առավելագույն դեկադային բարձրությունը կազմում է 58 սմ, ճնշումը – 70 կգ/մ<sup>2</sup>: Գրունտի սառչման առավելագույն խորությունը կազմում է 60 սմ: Չյան ծածկույթով օրերի միջին քանակը կազմում է 48: Հաստատուն ծածկույթը գոյանում է ոչ ամեն տարի:

**Տեղումների բնութագիրը**

Աղյուսակ 2.3.

Տեղումների քանակը _____ միջին _____, մմ												տարեկան
մաքսիմալ օրական												
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
<u>24</u>	<u>26</u>	<u>32</u>	<u>43</u>	<u>52</u>	<u>27</u>	<u>13</u>	<u>10</u>	<u>13</u>	<u>26</u>	<u>28</u>	<u>22</u>	<b>316</b>
21	23	34	29	42	31	29	26	51	35	36	28	<b>51</b>

Քամու նվազագույն միջին արագությունը հուլիս ամսին, որի կրկնվողությունը հասնում է 16 տոկոս, կազմում է 7.2 մ/վրկ: Քամու բացարձակ առավելագույն արագությունը 20 տարի մեկ անգամ հասնում է 24 մ/վրկ: Նորմատիվ հողմաբեռնվածքը կազմում է 45 կգ/մ<sup>2</sup>:

Քամու ակտիվությունը ռեգիոնում ըստ Երևան-«Էրեբունի» մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2.4-ում:

**Քամու բնութագիրը**

Աղյուսակ 2.4.

ամիս	<u>քամու կրկնվողությունն ըստ ուղղությունների և անդորրի, %</u>								
	քամու միջին արագությունը, մ/վրկ								
	Հս	ՀսԱրլ	Արլ	ՀվԱրլ	Հվ	ՀվԱրմ	Արմ	ՀսԱրմ	Անդորր
I	<u>3</u>	<u>10</u>	<u>13</u>	<u>16</u>	<u>20</u>	<u>26</u>	<u>9</u>	<u>3</u>	78
	2.0	2.1	2.2	2.8	2.6	2.3	2.7	3.4	

IV	<u>7</u> 3.1	<u>14</u> 2.9	<u>8</u> 2.4	<u>18</u> 3.5	<u>18</u> 3.0	<u>16</u> 3.0	<u>13</u> 4.1	<u>6</u> 3.4	50
VII	<u>17</u> 5.5	<u>31</u> 5.9	<u>3</u> 2.2	<u>9</u> 2.4	<u>16</u> 2.1	<u>13</u> 2.5	<u>7</u> 2.7	<u>4</u> 4.6	40
X	<u>5</u> 2.7	<u>18</u> 2.3	<u>10</u> 1.8	<u>11</u> 2.5	<u>19</u> 2.2	<u>22</u> 2.2	<u>10</u> 2.8	<u>5</u> 3.7	70

Արեգակնային փայլի տևողության, ճառագայթման ուժգնության բնութագիրը և ամպամած օրերի քանակը բերված են 2.5 – 2.7 աղյուսակներում:

**Արեգակնային ճառագայթում (Երևան)**

Աղյուսակ 2.5.

Գումարային ճառագայթում (ուղիղ + ցրված), որը մուտք է գործում հորիզոնական մակերևույթ անամպ երկինքի դեպքում, ՄՋ/մ <sup>2</sup>												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
264	423	586	804	1043	1182	1068	1047	842	620	339	214	<b>700</b>

**Արեգակնային փայլի տևողությունը (Երևան “Ագրո”)**

Աղյուսակ 2.6.

Տևողությունը ըստ ամիսների, ժամ												տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
89	118	169	212	283	334	359	352	300	246	144	90	<b>2696</b>

**Ամպամած օրերի քանակը (Երևան “Ագրո”)**

Աղյուսակ 2.7.

Ըստ ամիսների, օր												տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
10	6	4	2	0.2	0.1	0	0.1	0.3	1	4	11	<b>39</b>

Տարվա հաշվարկային կլիմայական պարամետրերը բերված են 2.8 – 2.9 աղյուսակներում:

Կլիմայական բնութագիրը տարվա ցուրտ ժամանակահատվածում, Երևան-Էրեբունի

Աղյուսակ 2.8.

Օդի ջերմաստիճանը, °C										Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Մթնոլորտային տեղումներ և գրունտի սառչման խորությունը		Քամի		
ամենա ցուրտ օրվա				ամենա ցուրտ հինգօրյակի				Տևողությունը (օր) միջին ջերմաստիճանը (°C) ժամանակահատվածում, երբ միջին օրական ջերմաստիճանը ոչ ավելի քան՝			միջին ամսական	միջին ամսական ժամը 15-ին	տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ	գերակշռող ուղղությունը դեկտեմբեր-փետրվար ամիսներին	հունվարին միջին արագությունների 9 առավելագույնը, ըստ տվյալների
ապահովվածություն				միջին ամենացուրտ ժամանակահատվածում	բացարձակ նվազագույնը	ամենացուրտ ամսվա միջին օրական ամալխտորա	0									
0.98	0.92	0.98	0.92				-3.6	-	8.3	70 -2.4	140 1.0	159 1.8	78	68	132	60

Կլիմայական պարամետրերը տարվա տաք ժամանակահատվածում, Երևան-Էրեբունի

Աղյուսակ 2.9.

Օդի ջերմաստիճանը, °C					Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Մթնոլորտային տեղումներ, մմ		Քամի	
ապահովվածություն		Միջին ամսական ամառային ամենատաք ամսվա միջին ամսական օրական ամառային	միջին ամսական	միջին ամսական ժամը 15-ին	տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին	օրական մաքսիմում	գերակշռող ուղղությունը հունիս-օգոստոս ամիսներին	հուլիսին միջին արագություններ ից նվազագույնը, ըստ ռումբերի, մ/վրկ		
0.95	0.99							հարավային	հարավային	
32	34	42	33	15.6	45	28	154	51	Հվ	2.1

### 1.3 Օդային ավազան

Երևան քաղաքի մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ բնապահպանության նախարարության “Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն” ՊՈԱԿ (Էկոմոնիտորինգ) կողմից: Երևանի տարածքում գործում են չափման ստացիոնար 5 կետեր, որոնց չափումների հիման վրա հաշվարկվում է քաղաքի օդի աղտոտվածության ֆոնային մակարդակը: Ստորև բերված են Երևան քաղաքի օդային ավազանի աղտոտվածության մասին տվյալներ ըստ Էկոմոնիտորինգի 2014 թվականի տեղեկանքի:

Քաղաքի №1, №2, №7, №8, №18, №16-1 և №19 դիտակայաններում շուրջօրյա (24-ժամյա) սկտիվ նմուշառման եղանակով կատարվել են օդային ավազանի դիտարկումներ: Որոշվել են մթնոլորտում փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները:

Ակտիվ նմուշառման միջոցով ընդհանուր առմամբ վերցվել է օդի 9963 փորձանմուշ: Որոշված նյութերի միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները (ՄԹԿ):

Մթնոլորտային օդի դիտարկումներ՝ ավտոմատ սարքերի միջոցով կատարվել են քաղաքի №1, №7, №8, №16-1, №19 դիտակայաններում: Որոշվել են մթնոլորտում ածխածնի մոնօքսիդի, ծծմբի երկօքսիդի և ազոտի օքսիդների պարունակությունները: Ավտոմատ սարքերի միջոցով ընդհանուր առմամբ կատարվել է օդի 347538 դիտարկում: Ավտոմատ դիտարկումների տվյալների համաձայն, քաղաքի մթնոլորտում որոշված նյութերի միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել ՄԹԿ-ները: Որոշված նյութերի տարվա առավելագույն կոնցենտրացիաները դիտվել են՝ ածխածնի մոնօքսիդինը՝ հունվարի 1-ին ժամը 20<sup>00</sup>-ին՝ 10.536 մգ/մ<sup>3</sup>, ծծմբի երկօքսիդինը՝ սեպտեմբերի 12-ին ժամը 17<sup>00</sup>-ին՝ 2.263 մգ/մ<sup>3</sup> (Կենտրոն համայնքի տարածքի մթնոլորտում):

Պասիվ նմուշառիչներով օդային ավազանի դիտարկումներ կատարվել են քաղաքի 48 դիտակետերում: Վերցվել է օդի 4715 փորձանմուշ, որոնցում որոշված ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել ՄԹԿ-ները:

Աղյուսակ 2. Ակտիվ նմուշառման եղանակով դիտարկումների արդյունքները Երևանում

Որոշվող նյութերը (դիտակայանների քանակ)	Դիտարկված առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ <sup>3</sup> (դիտակայանի համար)	ՍԹԿ-ից գերազանցումների քանակ		Միջին տարեկան կոնցենտրացիա (մգ/մ <sup>3</sup> )	ՍԹԿ միջին օրական (մգ/մ <sup>3</sup> )
		>1 ՍԹԿ	>5 ՍԹԿ		
Ծծմբի երկօքսիդ (7)	0.067 (դիտ. N18)	18	-	0.020	0.05
Ազոտի երկօքսիդ (7)	0.088 (դիտ. N18)	175	-	0.018	0.04
Փոշի (7)	2.387 (դիտ. N18)	694	34	0.126	0.15
Գետնամերձ օզոն (7)	0.257 (դիտ. N19)	53	1	0.010	0.03

Սույն հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում՝ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:

**1.4 Ջրային ռեսուրսներ**

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է Էկոմոնիտորինգի կողմից, որի տվյալները 2014 թվականի ամփոփ տեղեկանքից բերված են ստորև:

ՀՀ կառավարության կողմից «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 14 գետավազանային կառավարման տարածքների միջոցով:

**Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք**

Հրազդան գետի Երևանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս). պայմանավորված է լուծված թթվածնով, ԹԿՊ<sub>5</sub>-ով, ԹԲՊ-ով, ամոնիում և ֆոսֆատ իոններով, մանգանով, ընդհանուր անօրգանական ազոտով, ընդհանուր ֆոսֆորով և կախված մասնիկներով:

Գետառ գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով:

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածությունը չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված:

### 1.5 Հողերի նկարագիրը

#### *Հողերը*

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- ❖ Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- ❖ Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- ❖ Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

### 1.6 Հողերի նպատակային և գործառնական նշանակությունը

Նախատեսվող գործունեությունը իրականացվելու է Փ.Բուզանդ և Արամի փողոցներով սահմանափակվող թաղամասում:

Համաձայն 01/18-07/1-Ք-578-506 ճարտարապետահատակագծային առաջադրանքի հողատարածքի նպատակային նշանակությունը բնակավայրերի:

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ խառը կառուցապատման:

### 1.7 Թափոնների կառավարում

Երևանի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր: Թաղամասերի առանձին տեղերում աղբը թափվում է չնախատեսված վայրերում, ինչը հանգեցնում է տարածքի սանիտարական վիճակի վատթարացմանը: Սակայն դրանք քանակը մեծ չէ և գնալով ավելի է նվազում:

Նախատեսվող գործունեության ընթացքում կառաջանան միայն շինարարական թափոններ, որոնք նախատեսված է տեղափոխել Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված աղբավայր:

## 2. ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված աշխատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շինարարական հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի

հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

## 2.1 Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

## 2.2 Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հողային աշխատանքների իրականացման ընթացքում
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

## 2.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

### 2.3.1 Մթնոլորտային օդ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
- պարբերաար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաբերում:

### 2.3.2 Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,



- տարածքի հոսքերը կմխավորվեն մեկ բակային ցանցում և կմխացվեն սելավային ջրացանցին:

### 2.3.3 Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա
- Շինարարական աշխատանքների ընթացքում հանվող բնահողը համաձայն աշխատանքային նախագծի օգտագործվելու է որպես ետլիցք:

Շինարարական նյութերի և քսայուղերի պահեստները կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,

- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի:

### 2.3.4 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկիչով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական և կոլեկտիվ պահպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

### 2.3.5 Աղմուկ

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- պարբերապար ստուգել և կարգաերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախագգուշացումներ և աշխատողների անվտանգություն	<p>(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախագգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ</p> <p>(b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել</p> <p>(c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա:</p> <p>(d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ)</p> <p>(e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:</p>
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	<p>(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար՝ Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով</p> <p>(b) Շրջակա տարծքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով</p> <p>(c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի:</p>
	Աղմուկ	(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի

		<p>թույլատրված ժամերի միջակայքում</p> <p>(b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:</p>
	<p>Թափոնների կառավարում</p>	<p>(a) Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն քանդման շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:</p> <p>(b) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:</p> <p>(c) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից</p> <p>(d) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն</p> <p>(e) Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները բազմանվազ օգտագործել</p>
<p>Կեղտաջրերի հեռացում</p>	<p>Ջրի որակ</p>	<p>(a) Շինարարական անձնակազմը կօգտվի շինհրապարակում նախատեսված ժամանակավոր բիոզուգարանից</p> <p>(b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն նախատեսված տարածքներում, որտեղից ջրի արտահոսք չի լինի:</p>
<p>Հետիոտների և երթևեկության ապահովություն</p>	<p>Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի</p>	<p>(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.</p> <ul style="list-style-type: none"> <li>▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար,</li> </ul>

	<p>կամ անուղղակի վտանգներ</p>	<p>պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ</p> <ul style="list-style-type: none"> <li>▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում:</li> <li>▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին:</li> <li>▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար:</li> <li>▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում:</li> </ul>
--	-------------------------------	---

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում	- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում	- Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման	Շինհրապարակ տանող ճանապարհների	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս	Կապալառու

Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	<ul style="list-style-type: none"> <li>- Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում</li> <li>- հերթականության ապահովմամբ</li> <li>- Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում</li> </ul>	երթուղիներ	ստուգում	անսպասելի ստուգումների իրականացում	
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	<ul style="list-style-type: none"> <li>- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս, գործող մասնագիտացված կետերում</li> <li>- Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում</li> </ul>	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	<ul style="list-style-type: none"> <li>- Հանված հողերը պահեստավորում են թույլատրված վայրում</li> <li>- Անհրաժեշտության դեպքում ետլիցք, ավելցուկի օգտագործում ընկերությանը պատկանող տարածքի բարեկարգման նպատակով</li> </ul>	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու
Իներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային	- Աղբամանների տեղադրում	Շինհրապարակ	Արտաքին	Շինարարության	Կապալառու,

աղբի առաջացում	շինարարական հրապարակում		զննում	ողջ ընթացքում	քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ, ЕМЕП/ЕЕА, 2009:
2. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
3. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
4. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
6. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
7. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
8. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
9. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
10. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
11. "Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին" ՀՀ օրենքը, ընդունված 2006 թվականի դեկտեմբերի 20-ին:
12. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "նակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում: